ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԱՆՁՆԱԳԻՐ

ՄԱՐԶԸ	ԼՈՌԻ
ՀԱՄԱՅՆՔԸ	ԱԼԱՎԵՐԴԻ
ԲՆԱԿԱՎԱՅՐԸ	ԱԼԱՎԵՐԴԻ

1.ՊԱՏՄԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

Ալավերդին քաղաքային բնակավայր է դարձել 1939թ.-ից: Քաղաքի վարչական տարածքի մեջ մտնում են Ալավերդին, Ակները, Սանահինը և Մադանը:

Ալավերդին և նրա մերձակայքը բնակեցված են եղել դեռևս հին ժամանակներից: Հայտնաբերված հնագիտական նյութերն ընդգրկում են պատմական համարյա բոլոր դարաշրջանները: 1931 թվականին շինարարական աշխատանքների ժամանակ գտնվել են պղնձե և բրոնզե առարկաներ, այդ թվում՝ աշխատանքային գործիքներ, զենքեր, զարդեր, որոնցից ամենահինը պղնձե կտցավոր կացինն է: Այն թվագրվում է մ. թ. ա. 3–րդ հազարամյակի երկրորդ կեսին:

Հնագույն ժամանակներից ի վեր այստեղ իրականացվել է պղնձի հանույթ և մշակում: Պղնձարդյունաբերությունը բավական աշխուժացել է 18-րդ դարում, երբ Գյումուշխանեից այստեղ են եկել հույն հանքագործներ և կառուցել Ալավերդու պղնձաձուլական գործարանը: Գործարանը ամբողջովին ավերվել է Աղա Մահմեդ խանի 1795թ.-ի արշավանքի ժամանակ: 1887թ.-ին Ալավերդու պղնձարդյունաբերության մեջ իշխող դիրք են ձեռք բերում ֆրանսիացիները, որոնք տեղադրում են նոր հնոցներ և վառարաններ, ստեղծում մանր պղնձաձուլարաններ:

Պղնձի արտադրությունը Ալավերդու տնտեսության մեջ առանցքային դեր է խաղացել: Ներկայում պղնձաձուլական գործարանը չի գործում: Քաղաքի տնտեսական զարգացմանը նպաստել է նաև Թիֆլիս-Ալեքսանդրապոլ երկաթուղու կառուցումը:

Ալավերդին աչքի է ընկնում պատմական և ճարտարապետական հուշարձանների առատությամբ: Համայնքի տարածքը հարուստ է պատմամշակութային արժեք ներկայացնող հուշարձաններով: Դրանց մեջ են ՅՈՒՆԵՍԿՕ-ի համաշխարհային ժառանգության ցանկում ներառված Սանահինի վանական համալիրը և Սանահինի պատմական (Քարե) կամուրջը: Սանահինի Վանական համալիրի առաջին՝ Սուրբ Աստվածածին եկեղեցին կառուցվել է 10-րդ դարի 30-40-ական թվականներին (Աբաս Ա Բագրատունի թագավորի օրոք), իսկ 12-րդ դարի վերջին Դեբեդ գետի վրա կառուցվել է Սանահինի նշանավոր կամուրջը, որով անցնում է վանք տանող ճանապարհը:

2.ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ

Ալավերդին ՀՀ միջին մեծության բնակավայր է, գտնվում է հանրապետության հյուսիսային մասում, վարչականորեն մտնում է Ալավերդի համայնքի, Լոռու մարզի մեջ, մարզկենտրոն Վանաձորից հեռավորությունը 44 կմ է, Երևանից՝ մոտ 169 կմ, Ռուսաստանի Դաշնության սահմանից՝ մոտ 300 կմ, սահմանակից է Վրաստանի Հանրապետությանը: Համայնքի միջով է անցնում հանրապետության երկաթուղային հաղորդակցության գլխավոր երակը՝ Թբիլիսի–Երևան երկաթգիծը, հանրապետության արտահանման և ներկրման ավտոտրանսպորտային գլխավոր՝ Թբիլիսի-Ալավերդի-Երևան մայրուղին, ինչպես նաև՝ Հայաստանի ամենաջրառատ անդրսահմանային Դեբեդ գետը:

Ալավերդի համայնքի մակերեսը 67.9582 քառ. կմ է, տարածվում է Դեբեդ գետի երկու ափերին: Կտրտված ու բարդ ռելիեֆի պատճառով քաղաքի թաղամասերն իրարից բավականին հեռու են: Ռելիեֆին բնորոշ են տարբեր մակարդակի բարձրություններ (750-1400 մ), խիստ մեծ թեքություններ (մինչև 350):

3.ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԿԼԻՄԱՅԱԿԱՆ ՀԱՄԱՌՈՏ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Համայնքն ունի բարեխառն ու մեղմ կլիմա՝ պայմանավորված մակերևույթի համեմատաբար ոչ մեծ բարձրությամբ: Ամենաբարձր ջերմաստիճանը դիտվում է հուլիս ամսին՝ +30°C, +35 °C, ամենացածրը՝ հունվար, փետրվար ամիսներին՝ - 17-18 °C: Տեղումների քանակը 800 մմ է:

4.ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Նախկին (ՀԽՍՀ) վարչական շրջանի անվանումը	Թումանյան
2. Բնակավայրի հեռավորությունը՝	
2.1) համայնքի կենտրոնից (կմ)	0
2.2) մայրաքաղաքից (կմ)	169
2.3) մարզկենտրոնից (կմ)	44
2.4) պետական սահմանից ուղիղ գծով (կմ)	16.0
2.5) նախկին շրջկենտրոնից (կմ)	0
2.6) միջպետական նշանակության ավտոճանապարհից (կմ)	0
2.6) մոտակա երկաթուղային կայարանից (կմ)	0
4. Բնակավայրի բարձրությունը ծովի մակերևույթից (մ)	750-1400
5. Բնակավայրի վարչական տարածքը (քառ. կմ/հա)	67,9582/6795,82
6. Սահմանակից համայնքների և/կամ բնակավայրերի անվանումները	Օձուն, Աքորի, Հաղպատ, Ջիլիզա
7. Բնակավայրի վարչական ղեկավարի հեռախոսահամարը	(+374) 93-71-30-10
8. Բնակավայրում փոստային բաժանմունքի առկայությունը (այո, ոչ), քանակը	այո/7
9.Հաստատված գլխավոր հատակագծի առկայությունը (այո, ոչ)	այո
10. Քաղաքացիների սպասարկման գրասենյակի առկայությունը (այո, ոչ)	այո

5.ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆԸ, ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԿԱԶՄԸ

	2022թ.
1. Մշտական բնակչության թվաքանակը	12315
2. Գրանցված ծնունդների քանակը	229
2.Մահացության դեպքերի քանակը	419
3.Ամուսնությունների քանակը	103
4. Ամուսնալուծությունների քանակը	42

5. Տնային տնտեսությունների թիվը	6350
6. Ընտանեկան նպաստ ստացող տնային տնտեսությունների քանակը	265
7. Կենսաթոշակառուների քանակը	3261
8. Հաշմանդամություն ունեցող անձանց քանակը	1347

6.ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ, ԿՐԹԱԿԱՆ, ՄԱՐԶԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

	01.01.2023թ.
1. Գրադարանների քանակը	3
2. Արվեստի դպրոցների քանակը	2
3. Երաժշտական դպրոցների քանակը	1
4. Նախադպրոցական հիմնարկների քանակը	7
5. Հանրակրթական դպրոցների քանակը	10
6. Նախնական մասնագիտական (արհեստագործական) ուսումնական հաստատությունների քանակը	1
7. Միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների քանակը	1
8. Բարձրագույն ուսումնական հաստատությունների քանակը	1
9. Մարզադպրոցների քանակը	2

7.ԲՆԱԿԵԼԻ ՖՈՆԴ

	01.01.2023թ.
1. Բնակավայրի բնակարանային ֆոնդի ընդհանուր մակերեսը (մ^2)	304134
2. Բազմաբնակարան շենքերի ընդհանուր թիվը	182
3. Բնակելի տների (առանձնատների) ընդհանուր թիվը	1528

8.ՀՈՂԱՅԻՆ ՖՈՆԴ ԵՎ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

	01.01.2023թ.
1. Գյուղատնտեսական նշանակության հողեր (հա)	9992.65
2. Բնակավայրերի հողեր (հա)	981.24
3. Արդյունաբերական, ընդերք օգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների	172.34
4. Էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների օբյետներ	178.09

5. Հատուկ նշանակության	110.27
6. Հատուկ պահպանվող տարածքների	6.0
7. Անտառային	17967.64
8. Ջրային	105.67
9.Խոշոր եղջերավոր անասունների գլխաքանակը	663
10. Մանր եղջերավոր անասունների (ոչխար և այծ) գլխաքանակը	463
11. Խոզերի գլխաքանակը	431
12. Գյուղատնտեսական տեխնիկա	13
12.1 տրակտորներ (քանակը)	13
12.2 կոմբայններ (քանակը)	0
13. Գյուղացիական տնտեսությունների թիվը	43

9.ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐ

1. Էլեկտրական ենթակայանների քանակը	47
2. Բնակավայրի գազիֆիկացման առկայությունը (այո, ոչ)	Այո
3. Բնակավայրի աղբավայրի առկայությունը (այո, ոչ)	Այո
4. Բնակավայրում գերեզմանատան առկայությունը (այո, ոչ)	Այո
5. Ներբնակավայրային ճանապարհների ընդհանուր երկարությունը (կմ)	48,3
6. Կոմունալ և ճանապարհաշինական տեխնիկայի առկայությունը	30
6.1 Ինքնաթափ բեռնատար մեքենաների քանակը	12
6.2 Էքսկավատորների քանակը	5
6.3 Թրթուրավոր տրակտորների քանակը	2
6.4 Գրեյդերների քանակը	2
6.5 Աղբատար մեքենաների քանակը	7
6.7 Բազմաֆունկցիոնալ կոմունալ մեքենաների քանակը	2
6.8 Վակումային փոշեկուլ մեքենաների քանակը	0
6.9 Ավտոաշտարակների քանակը	0
7. Բնակավայրի տարածքով անցնող միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների ընդհանուր երկարությունը (կմ)	12,812
8. Բնակավայրի տարածքում գործող առևտրային բանկերի մասնաճյուղերի առկայությունը (այո, ոչ) և դրանց քանակը	Այո/3
9. Ներհամայնքային երթուղիների առկայությունը (այո, ոչ)	Այո
10. Ներբնակավայրային երթուղիների առկայությունը (այո, ոչ)	Այո

10.ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐ

	01.01.2023թ.
1. Բնակավայրում համայնքապետարանի աշխատողների թվաքանակը,	31
որից՝ 1.1 համայնքային ծառայողներ	0
2. Բնակավայրի բնակիչ ավագանու անդամների թվաքանակը	10

11. ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

Հիմնախնդիրը (նկարագրությունը)	Ակնկալվող լուծումը
Գործազրկության բարձր մակարդակ	Բիզնեսի համար նպաստավոր պայմանների ստեղծում, Ալավերդի համայնքում բիզնես-ներդրումների խրախուսում:
Ճանապարհների և մայթերի հիմնանորգման ահրաժեշտություն	Հողային ծածկույթով (գրունտային) ճանապարհների վերակառուցում, ասֆալտապատում, ճանապարհների և մայթերի հիմնանորոգում:
Կամուրջների անմխիթար վիճակ	Համայնքի կամուրջների հիմնանորոգում:
Ոռոգման ջրագծերի վերանորոգման և նոր ոռոգման ցանցերի ստեղծման անհրաժեշտություն	Առկա վնասված ոռոգման համակարգերի վերանորոգում, նոր ոռոգման ցանցի կառուցում
Քարաթափման անհրաժեշտություն	Քարաթափման աշխատանքների իրականացում
Քանդված և վնասված հենապատերի վերանորոգման ու նոր հենապատերի կառուցման անհրաժեշտություն	Քանդված և վնասված, վթարային հենապատերի հիմնանորոգում, անվտանգության աստիճանի բարձրացում, նոր հենապատերի կառուցում
Բազմաբնակարանային շենքերի մուտքերի, աստիճանների և տանիքների անբարեկարգ վիճակ	Բազմաբնակարանային շենքերի մուտքերի, աստիճանների և տանիքների վերանորոգում
Հեղեղատարների մաքրման, ամրացման և նոր հեղեղատարների կառուցման անհրաժեշտություն	Ամեն տարի հեղեղատարների մաքրման աշխատանքների կազմակերպում, հեղեղատարների վերանորոգում և նոր հեղեղատարների կառուցում:
Աստիճանների անբարեկարգ վիճակ	Աստիճանների և աստիճանահարթակների հիմնանորոգում:
Վերելակների արդիականացման անհրաժեշտություն	Չգործող վերելակների վերանորոգում, վերագործարկում, գործող վերելակների անվտանգության ապահովում դրանց արդիականացման և ընթացիկ պահպանման միջոցով:

Ոչ արդիական լուսավորության համակարգ, չլուսավորված փողոցների, բակերի և խաղահրապարակների լուսավորման անհրաժեշտություն	Լուսատուների փոխարինում նոր էներգախնայող լուսատուներով, արտաքին լուսավորության ցանցի ընդլայնում՝ ընդգրկելով բոլոր չլուսավորված հատվածները (փողոցներ, բակեր, խաղահրապարակներ, մշակութային կոէողներ և այլն)
Սանմաքրման և ձնամաքրման աշխատանքների բարելավման անհրաժեշտություն	Սանմաքրման և ձնամաքրման աշխատանքների համար անհրաժեշտ տեխնիկայի բազայի թարմացում, նոր տեխնիկաների ձեռքբերում և դրանցով համապատասխան աշխատանքների իրականացում:
Կոյուղագծերի հիմնանորոգման անհրաժեշտություն, համայնքի որոշ բնակավայրերում դրանց բացակայություն	Կոյուղագծերի հիմնանորոգում, նոր կոյուղագծերի անցկացում
Կրթական և մշակութային հաստատությունների շենքային ու բակային պայմանների բարելավման անհրաժեշտություն	Կրթական և մշակութային հաստատությունների շենքերի և բակերի վերանորոգման, բակերի բարեկարգման աշխատատքների իրականացում
Հանրային զուգարանների բացակայություն	Համայնքում հանրային զուգարանների կառուցում:
Կենցաղային թափոնների տեսակավորման և վերամշակման անհրաժեշտություն	1. Աղբարկղերի (պլաստիկի, ապակու, թղթի և խառը) ձեռքեբերում և տեղագրում: 2. Աղբի տեսակավորման կայանի ստեղծում: Տեսակավորված աղբի վերամշակման կազմակերպում:
Հանրային կանաչապատ տարածքների ընդլայնման անհրաժեշտություն	Կանաչապատման համար տարածքերի նախանշում և այդ տարածքների կանաչապատում